ՄԱԳԴԱ ԱՐՍԵՆՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտ

ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ

Ներկա փոփոխվող գլոբալ սոցիալական տարածությունում պետության ինստիտուտի դերի վերաիմաստավորման անհրաժեշտություն է առաջանում, ինչը պայմանավորված է սոցիումի կենսագործունեության հետարդիական զարգացումներով: Հարկ է մշակել այն գերակա ուղղությունները, որոնք պետք է կազմեն նոր պետական կառավարման առանցքային հիմքը և նախորոշեն վերջինիս սահմաններն ու իրավասության ոլորտները: Արդի օրեցօր կերպափոխվող անհատականացված հասարակության տիրույթում պետության ինստիտուտի և պետական կառավարման գերակա նպատակ է դառնում անհատի անվտանգ կեցությունը, անհատականացված քաղաքացիական հասարակության ու պետության միջև ազգային երկխոսության հաստատումը, ինչպես նաև պետության ինստիտուտի հոգևոր ու մշակութային դերակատարումը սոցիումի կենսագործունեության շրջանակներում, ինչը կբացառի ինքնության ճգնաժամը և անհատի օտարումը սոցիումից, հայրենիքից, պետությունից և կառավարող ընտրանուց:

Հիմնաբառեր. ինքնության ճգնաժամ, անվտանգայնացում (սեկյուրիտիզացիա) և ապաանվտանգայնացում (դեսեկյուրիտիզացիա), գլոբալ անհատ, պետական կառավարման բազմաձևություն, գլոբալացում, պետության ինստիտուտի տրանսֆորմացում:

Պետության ինստիտուտը, լինելով հանրային և պետական կառավարման գերակա դերակատար, գտնվում է շարունակական և չընդհատվող կերպափոխման տիրույթում: Պետության ինստիտուտի պատմական ու քաղաքական զարգացումներն առաջադրում են պետության ինստիտուտի բազմաձևությունը և պետական կառավարման սահմանների շարժունակությունը: Պետության ինստիտուտի և պետական կառավարման բազմանշանակ դերակատարումը հասարակության կենսագործունեության շրջանակներում բազմաթիվ բանավեճերի տեղիք է տալիս: Որոշ գիտնականներ կարծում են, որ գլոբալացման պայմաններում պե-

տական կառավարման նոր կառուցակարգերի և գործիքների առաջացումը չի արտացոլում «տվյալ ինստիտուտի թուլացումը», այլ ներկայացնում է այն «հնացած մոդելների փոխարինումն ու կերպափոխումը, որոնք այլևս ունակ չեն պատասխանել ներքին և արտաքին մարտահրավերներին» [1]: Վերոնշյալ մոտեցման կողմնակիցները պնդում են, որ ներկայումս, պետությունը ոչ թե սպառել է իրեն՝ որպես հանրային կառավարման գերակա ինստիտուտի, այլ այն, պարզապես, այլ կերպ է սահմանում հասարակության զարգացման միասնական քաղաքականության եզրագիծը՝ «փոխանցելով իր ենթամասը կազմող կառավարչական սուբյեկտներին այն մոտիվացիոն ստեղծագործական ներուժը, որն անհրաժեշտ է կարևորագույն հիմնախնդիրների լուծման դեպքում» [2]:

Պետության ինստիտուտի և պետական կառավարման տրանսֆորմացման քաղաքական բացառիկությունը ներկայացնում է ամերիկացի փիլիսոփա՝ Ֆ. Ֆուկույաման, այն անվանելով «պատմության ավարտը» և մեկնաբանելով հետևյալ կերպ. «...Ավելին, ես պնդում եմ, որ ազատական ժողովրդավարությունն իրենից ներկայացնում է մարդկության գաղափարական բարեշրջման վերջնակետը և հասարակական կառավարման վերջնական ձևը, դրանով իսկ ներկայանալով որպես պատմության ավարտ» [3, c. 7]: Վերջինս մարմնավորում է սոցիումի կառավարման շրջանակներում գերակա համարվող հիմնային ազատական արժեքներն ու ժողովրդավարական սկզբունքները:

Պետության ինստիտուտի հետարդիական տրանսֆորմացումների ասպեկտում «լիբերալիզմ և դեմոկրատիա հասկացությունները, չնայած սերտորեն կապված են միմյանց, բայց և միևնույն ժամանակ խիստ տարանջատված հասկացություններ են [3, c. 85]»: Վերջինս արտացոլվում է «պատմության ավարտի» երկու կարևորագույն բաղադրատարրերի շրջանակներում՝ ինստիտուցիոնալ և արժեքային:

Ինստիտուցիոնալ բաղադրատարրի էությունն այն է, որ որպես քաղաքական և պետական գործընթացների կառավարման գերակա ձև, հանդես է գալիս ազատ ընտրության վրա հիմնված ժամանակակից պոլիարխիկ ժողովրդավարությունը [4, c. 90]: Բացի այդ հարկ է նշել, որ ժողովրդավարությունը, առաջին հերթին, գտնվում է անընդհատ կերպափոխման մեջ՝ ըստ քաղաքակրթական զարգացման մակարդակի, և երկրորդ՝ գործնականում գոյություն չունեն երկու բացարձակ միանման ժողովրդավարություններ, որոնք յուրաքանչյուր երկրում իրացվում են՝ համապատասխան ազգային ու պատմական յուրահատկությունների և առանձնահատկությունների: Բացի այդ, ժողովրդավարությունը, ըստ ամերիկացի քաղաքագետ՝ Ադամ Պշևորսկու «ընթացակարգերի որոշակիության պայմաններում արդյունքների անորոշությունն է» [5, c. 124],

ինչը բնորոշում է քաղաքական և պետական գործընթացների կառավարման ազգային ձևաչափերն ու կառուցակարգերը, որոնք էլ հենց սահմանում են ժողովրդավարության էական տարբերակումը կառավարման մյուս ձևերից [6, c. 12-15]:

Երբ խոսում ենք կառավարման համակարգերի մասին, թվում է թե անձի հանրային և ազգային անվտանգ կեցության ապահովումը և ազատության երաշխիքների առկայությունը ժողովրդավարական կառավարման համակարգի կարևոր նախապայմաններ են: Սակայն անընդհատ կերպափոխվող իրականության միտումները ցույց են տալիս, որ անձն իրեն ավելի անվտանգ է զգում տոտալիտար, ինքնիշխան վարչակարգերի կառավարման տիրույթում: Այս պարագայում խոսքը հիմնականում հետխորհրդային երկրների մասին է: Մարդիկ դեռևս շարունակում են ապրել խորհրդային, բայց միևնույն ժամանակ, համաձայն իրենց տեսակետի՝ անվտանգ տարածությունում: Մարդն իրեն անվտանգ չի զգում գլոբալ տարածության շրջանակներում և արդյունքում ինքնաօտարվում է: Սակայն պետք չէ մոռանալ, որ Խորհրդային Միության փլուզման գլխավոր պատճառներից մեկը ժամանակի և տարածության մեջ սեփական տարածականությունն ապահովելու անկարողությունն էր [7]: Ամբողջ խնդիրն այն է, որ շարունակական քաղաքական փոխակերպումների համակարգի պայմաններում մարդկանց գիտակցությունում տեղի է ունենում ժողովրդավարության և ազատականության, ազատականության և ազատության, ազատության և արդար քաղաքական վարչակարգի արժեքների զուգակցում: Արդյունքում նույնականացվում են «ժողովրդավարության» և «լավ կառավարման» մասին պատկերացումները, որոնք «ժողովրդավարություն» եզրույթը վերլուծական տեսանկյունից անհնարին են դարձնում: Սակայն ժողովրդավարությունը կարող է լինել նաև ոչ ազատական՝ լինելով ինքնիշխան կառավարման համակարգերի համար իշխանության ամրապնդման միջոց, ինչը տեղի է ունենում հետխորհրդային մի շարք երկրների մեծամասնությունում [8]: Ժողովրդավարությունն ինքնանպատակ չէ և չի մարմնավորում հասարակական-քաղաքական կարգի կատարելիությունը, քանի որ այն, առաջին հերթին, բնորոշում է կառավարման ձևը, բայց ոչ երբեք սոցիալական կազմակերպության էությունը: Ֆ. Ֆուկույաման, պատմական հոլովույթում դիտարկելով XX դարի ավտորիտար վարչակարգերը, հանգում է այն եզրակացության, որ «.... առանցքային թերությունը, որը վերջիվերջո կործանեց բոլոր ուժեղ պետությունները ներսից՝ լեգիտիմության բացակայությունն էր, այսինքն՝ ճգնաժամը գաղափարական մակարդակում»: Լեգիտիմությունը հանդես է գալիս որպես պետության գոյության իրավունքի գաղափարական հիմք: Այս թերությունը արդիական է նաև XXI

դարի պետությունների համար, որի մաս է կազմում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Անգլիացի սոցիոլոգ, փիլիսոփա, մշակութաբան՝ Ա. Թոյնբին իր «Լոկալ քաղաքակրթությունների» [9] հայեցակարգում ներկայացնում է այն դիտարկումը, համաձայն որի պատմական բարեշրջման վերլուծության կենտրոնում գտնվում են այն հասարակությունները, որոնք ունեն տարածականություն ժամանակի և տարածության մեջ: Հենց այդ հասարակությունները Ա. Թոյնբին անվանում է «լոկալ քաղաքակրթություններ»՝ վերջիններիս գենեզիսը մեկնաբանելով «մարտահրավեր և պատասխան» կառուցակարգի օգնությամբ [10]: Արտաքին անբարենպաստ միջավայրը «մարտահրավեր» է նետում հասարակությանը, որին հասարակությունը պատասխանում է ստեղծագործական փոքրամասնության միջոցով: «Մարտահրավերը», ըստ էության, բխում է գլոբալ մշակույթի առաջացմամբ, որն իր բնույթով ունի արևմտյան ուղղվածություն և ամերիկյան ծագումնաբանություն, և շոշափում է ինչպես ընտրանու, այնպես էլ լայն զանգվածների շահերը: «Պատասխանը» հասարակությունների կողմից, որոնց դեմ էր ուղղված «մարտահրավերը», գնահատվում է «ընդունում» և «մերժում» սանդղակով՝ այնպիսի միջակայքային աստիճանավորումներով, ինչպիսիք են՝ «համագոյակցումն» ու «սինթեզը»: Գործնականում միայն անհատներից բաղկացած հասարակությունն է ունակ ապահովել կայուն զարգացում: Ա. Ս. Թոյնբիի «Մարտահրավեր և պատասխան» կառուցակարգում դիտարկենք «հոլիզմ (holism)» [11] եզրույթը, որի համաձայն, որպես բարձրագույն օրգանիզմ դիտարկվում է անհատը, որն իր մեջ սինթեզում է սուբյեկտիվ և օբյեկտիվ հարթությունները: Առանց այս երկու հարթությունների առկայության, անհատի սոցիալականացման գործընթացը լիարժեք չի համարվում: Holism-ի առկայության պայմաններում, մարդը կայանում է որպես անհատ, երկխոսում և հպատակեցնում է իր «Ես»-ին՝ կրելով այն դիմակը, որն անհրաժեշտ է տվյալ պարագայում փոփոխվող աշխարհի միտումներին և մարտահրավերներին արձագանքելու համար: Գլոբալացման, արդիականացման և շարունակական փոխակերպումների պայմաններում, գլոբալացվող հասարակությունը և հատկապես պետությունը պետք է ստեղծի հնարավորություններ holism-ի դրսևորման համար, որը հանդես կգա որպես անվտանգայնացնող (սեկյուրիտիզացնող) գործընթաց, որպես պատասխան այն մարտահրավերներին, որոնք շոշափում են գլոբալ հասարակության շրջանակներում անհատի ինքնագիտակցության և ազգային ինքնության եզրերը: Գլոբալացման ենթարկվող աշխարհում անհատի ինքնության ճգնաժամը հաղթահարելու համար անհրաժեշտ են պետության կողմից անվտանգայնացում (սեկյուրիտիզացիա) իրականացնող գործընթաց-

ներ: Սակայն անհատի ինքնության անվտանգայնացումն (սեկյուրիտիզացիան) անհնար կլինի իրականացնել առանց «semiotic» և «holistic» կառուցվածքների: Այս երկու կառուցվածքները պետության՝ մակրոմակարդակում և անհատի՝ միկրոմակարդակում, պետություն-անհատ երկխոսությունն ապահովող կարևորագույն բաղկացուցիչներն են: Շարունակականական գլոբալացման ենթարկվող աշխարհում անհատի սոցիալականացման, ազգային ինքնագիտակցության և ինքնության ճգնաժամերը վերածվում են ազգային անվտանգության սպառնալիքների: Հանրային գիտակցության անվտանգայնացման (սեկյուրիտիզացիայի) գործընթացը հաջողությամբ և արդյունավետ իրականացնելու համար անհատի և պետության միջև երկխոսությունը պետք է հիմնվի խոսակցական ակտի վրա, ինչը հնարավորություն է տալիս անհատին հանդես գալ որպես դերակատար իր իսկ անվտանգայնացման (սեկյուրիտիզացիայի) գործընթացում: Այսինքն՝ խոսակցական ակտի շնորհիվ, որն իրենից ներկայացնում է semiotic ամբողջություն, անհատին և պետությանը հնարավորություն է ընձեռնվում ցուցաբերել holism՝ միաժամանակ լինելով և՛ օբյեկտ, և՛ սուբյեկտ: Այս պարագայում սոցիալականացվում է ոչ միայն անհատը, այլև պետությունը, ինչը հանգեցնում է ազգային ինքնագիտակցության և ինքնության տրանսֆորմացման ու արդիականացման գործընթացների հաղթահարմանը: Ի հայտ եկան գործոններ, որոնք կանխորոշեցին իշխանության և կառավարման հետագա ապակենտրոնացման համակարգման և համաքաղաքական վերահսկողություն անհրաժեշտությունը: Էապես կերպափոխվել է նաև պետական բյուրոկրատիայի էթիկան, որն ունի առանցքային դերակատարում որոշումների նախամշակման և իրականացման փուլերում: Առավել կարևորագույն տեղ է զբաղեցնում հանրային կապիտալը՝ որպես քաղաքացիական հասարակության «ճարտարապետության» գործիք:

«New Public Management» հասկացությունը, առաջին անգամ կիրառվել է Պիտտեր Օկոյնայի [12] և Քրիստոֆեր Խուդայի [13] հոդվածներում, որտեղ տվյալ եզրույթը, որպես լեգիտիմ և արդյունավետ պետական կառավարման հիմք, դիտարկում է բյուրոկրատական մշակույթը: Վերջինս հետապնդում է բյուրոկրատական համակարգի ներքին վերահսկողական համակարգ, այն է՝

→ իրավական վերահսկողություն և օրենսդրականացում (կոնսոլիդացիա),

→ ֆինանսական վերահսկողություն (պետական միջոցների արդյունավետ և օպտիմալ օգտագործում),

→ քաղաքական վերահսկողություն (պետության կառավարչական և քաղաքական ենթահամակարգերի տարանջատում),

→ ժողովրդավարական վերահսկողություն (հանրային ծառայողների պատասխանատու և հաշվետու գործունեություն),

→ էթիկական վերահսկողություն (էթիկայի նորմերին և բարոյական չափանիշներին համահունչ գործելաոճ) [14]:

Վերոնշյալ դրույթների պարագայում ձևավորվում է բյուրոկրատական համակարգը, որի անմիջական մաս պետք է կազմի ընդդիմությունը՝ հակաբիտրանին, որպես պետական իշխանության մարմինների գործունեությունը հավասարակշռող, զսպող ու համակարգող պետական և քաղաքական ուժ, որը մշակում է միասնական պետական քաղաքականություն հասարակական կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ երաշխավորելով հանրային անվտանգ կեցությունը: Վերջինս, սակայն, ՀՀ պետական կառավարման շրջանակներում ապաանվտանգայնացնում (դեսեկյուրիտիզացնում) է հանրային կեցությունը, և որպես հետևանք ընդդիմությունը դիտարկվում է որպես այլընտրանքային անվտանգություն: Առկա, այնպիսի արդեն իսկ անվերահսկելի դարձած գործընթացների պարագայում, ինչպիսիք են՝ արտագաղթը, սոցիալական երկխոսության բացակայությունը, աղքատությունը, հասարակության խորացող ծերությունը, մարգինալ դրսևորումները, անհատի և գլոբալ անհատի միջև բախումը, հայ առաքելական եկեղեցու, հանրային ծառայության համակարգի, հայ ազգային պետության լեգիտիմության կտրուկ անկումը հետապնդում է շուտափույթ գործողությունների նախաձեռնում համապատասխան ոլորտներում: Պետական կառավարման համակարգի գործունեության ամենամյա ծրագրերն անարդյունավետ են և չեն ապահովում օրենսդրականացման (կոնսոլիդացման) անհրաժեշտ մակարդակ: Ավելին, ՀՀ հանրային զարգացման որոշ հայեցակարգեր անգամ չեն համապատասխանում համաժամանակյա զարգացումներին: Լեգիտիմության բացակայությունը գաղափարական մակարդակում հանգեցնում է անձի օտարմանը իր արմատներից, հայրենիքից, պետությունից և կառավարող ընտրանուց: Անհրաժեշտ է մշակել հանրային և հոգևոր անվտանգության ռազմավարություններ, որոնք ուղղված կլինեն հիմնախնդիրների լուծմանը: Հակառակ դեպքում, պետության ինստիտուտի՝ որպես հանրային կառավարման գերակա սուբյեկտի դերակատարման, կարող ենք համարել սպառված:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ***Pierre J., Peters B.*** Politics and the State. L., 2000.

2. ***Михайлова О. В***. Концепция «Governance»: политические сети в срвременном государственном управлении // Вестн. Моск. Ун-та. Сер. 21. Управление (государство и общество). 2009. № 2.

3. ***Фукуяма Ф.*** Конец истории и последний человек. М.: АСТ. 2007. С. 7.

4. ***Даль Р.*** О полиархической демократии как «власти многих» см.: О демократии. М.: Аспект Пресс, 2000. С. 90

5. ***Цит. по: Мельвиль А. Ю.*** Демократические транзиты // Политология: Лексикон / под ред. А. И. Соловьева. М.: РОССПЭН, 2007. С. 124

6. ***Нисневич Ю. А.*** О процедурах и механизмах современной демократии см.: Аудит политической системы посткоммунистической России. М.: Материк, 2007. С. 12-15.

7. ***Инглхарт Р.*** «Постмодерн: меняющиеся ценности и изменяющиеся общества»// "Полис" ("Политические исследования") 1997-№4

8. ***Закария Ф.*** Будущее свободы: нелиберальная демократия в США и за их пределами. – М.: Ладомир. 2004.

9. ***Тойнби А.Дж.*** Постижение истории: Сборник / Пер. с англ. Е.Д. Жаркова; Сост. А.П.

10. ***Под ред. П. Бергера и С. Хантингтона*** /Многоликая глобализация / Пер. с англ. В. В.

11. ***Хантингтон, С.*** Кто мы? Вызовы американской национальной идентичности / С. Хантингтон. –М. : ООО «Транзиткнига», 2004. – 635 с, с. 35-36

12. ***Aucoin P.*** Administrative Reform in Public Management: Paradigms, Principles, Paradoxes and Pendulums // Governance. 1990. Vol. 3, P. 115-137

13. ***Hood C. A.*** Public Management for All Seasons? // Public Administration. 1991. N 69 (1), P. 3-19

14. ***Michael Barzelay.,***"The New Public Management"., Improving Reserach and Policy Diialogue, P. 238, 2001.

МАГДА АРСЕНЯН
Магистрант Акакдемии
государственного управления РА

ИМПЕРАТИВЫ ТРАНСФОРМАЦИИ ИНСТИТУТА ГОСУДАРСТВА В РАМКАХ ГЛОБАЛИЗАЦИИ

В статье рассматриваются и системно анализируются тенденции и проблемы развития государства как политического института в условиях постиндустриального транзита. Изучено проблема кризиса идентичности и ею обуловленная необходимость трансформации государственного управления. Все выше названное рассматривается в рамках глобального пространства и в связи с этим анализируются все плюсы и минусы данного феномена. В статье также предложены определенные подходы в исследовании таких проблем, как многогранность форм управления, национальный диалог между государством и личностью, конфликт между глобалной личностью и личностью, секюритизация и десекюритизация личности и государства как единого организма. В статье учтены тематические работы таких исследователей данной проблемы, как Ф. Фукуяма, А. Тойнби, С. Хантингтон и другие.

Ключевые слова: кризис идентичности, секюритизация и десекюритизация, глобальная личность, многогранность государственного управления, трансформация интститута государства.

MAGDA ARSENYAN
Master's Program Student of the Public
Administration Academy of the RA

TRANSFORMATION IMPERATIVES OF THE STATE INSTITUTION WITHIN THE FRAMEWORK GLOBALIZATION

The article comprehensively discusses and analyses the trends and problems of development of the state institution within the framework of postmodern transition. The author examines the problem of identity crisis within globalization process and due to it the need of transformation of public administration. The article also discusses the pluses and minuses of global space fenomena. The author suggests certain approaches of researching problems such as the need of transformation of multifaceted governance, national dialogue between the state and individual, conflict between global personality and individual, securitization and desecuritization of the state and personality as a whole. The author considers the case studies of famous researchers such as F. Fukuyama, A. Toynbee, S. Hantington and etc.

Keywords: identity crisis, securitization and desecuritization, global personality, multifaceted governance, transformation of the state institute.